

## Ա. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

### ՍԱՆԱՀԻՆ ԵՎ ՀԱՂՊԱՏԻ ՄԵԽԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑԻՑ

(Այդ հաստատությունների հիմնադրման 1000-ամյակի առթիվ)

Հեռավոր ժամանակներից Անդրկովլիկասում, Ասիայի և Եվրոպայի սահմանի վրա, ընկած էր բավականին ընդարձակ մի աշխարհ՝ պատմական Հայաստանը: Իր ամենախորթան դարերում այն համարվում էր ժամանակի քաղաքակիրթ և հզոր պետություններից մեկը, իսկ նվաճված տարիներին՝ մաքառուներով և թագավորություններով հոյն մի վտանգ՝ բոլոր իշխողների համար: Բավական էր, որ հաւաքամանըները մերեին, և նա նորից ոտքի կանգներ իր ողջ մեծությամբ և ստեղծագործական բնասուր հանձնարով: Դրա փայլուն ապացույցներից մեկն էր հայոց Բագրատունյաց թագավորության ծնունդն ու հերոսական պատմությունը: Մեծ չէր նրա գոյատևման շրջանը. ընդամենը երկու դար, այն էլ հաճախակի բնիկվող պատերազմական գործողություններով լի: բայց մեծ եղավ նրա օրդած աշդեցությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության պատմության մատյանում: Աղյուսակը ու ԱԾին, Հաղպատն ու Սամասինը, Գրիգոր Նարեկացին ու Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավագն ու Միհիթար Գոշը, «Սաստացի Դավիթ» Հպուն ու մեր բարձրարվեստ հայրենները բավական էին հայ ժողովրդին դատելու իր ժամանակի ամենաառաջավոր երկրների շարքը: Իսկ եթե հիշենք նաև Կիլիկիան Հայաստանի ծնունդն ու ծաղկութը, նրա քաղաքներն ու տաճարները, քերտերն ու ամրոցները, ինչպես նաև աշխարհին պարգևած նրա տիտաններին՝ Ներսես Շնորհալուն և Թորոս Մոսկինին, Ներսես Լամբրոնացուն ու Վարդան Ալգեկցուն, ապա պատկերն ավելի պարզ կլինի, որովհետև այդ թագավորությունը Բագրատունների ու ազգա-քաղաքական, սոցիալ-տնտե-

սական, կրթա-մշակութային կյանքի գոյատելման մի նորորակ բռնկումն էր՝ Միջերկրական ծովի բարձրադիր ափերին:

Հայ ժողովրդի հոգեոր հարստություններին քաջատեղյակ ուսու գիտնական Վ. Բրյուսովը, խուելով Բագրատունների ժամանակաշրջանի գիտության և գրականության զարգացման աստիճանի մասին, գործ է.

«Այդ դարաշրջանի ստեղծագործությունները վկայում են, որ հայ գիտնականների իմացությունների մակարդակը 10—11-րդ դուռընչով պահանջ էլու նրանց եկլոգացի գրքայիցներից»: «Բոլոր հիմքերը կան աւելու, որ Բագրատունների ժամանակաշրջանում կրթության միջին մակարդակը Հայաստանում եվրոպական այն ժամանակվա մի քանի երկրներից բավականաշատ բարձր էր»: Ստեղծված գրական արտադրանքը՝ այն ժամանակվա բանաստեղծությունը, արդեն բոլվանդակում է հաջորդ դարերի փարթամ ծաղկումի աղմերը և մի շարք առումներով մնում է չգերազանցված»<sup>1</sup>:

Բագրատունների թագավորության անդրանիկ քայլը եղավ որոնել Արտաշեալ և Արշակունի թագավորների ազգաբանական ու պետական սահմանները: Գելք հյուսիսում դա նրանց հաջողվեց: Հիշենք Հովհաննես Դրախմանակերտցու վկայությունը հայոց Սմբատ Առաջինի տիրությների մասին. «Եւ այսպէս, ձգտեալ անեցուցանէլու զահիդ տերութեան իրոյ յարևմտից հիասիս մինչև ցկարնոյ քաղաք, և անդր ևս քան զիշարչութեալ մինչև առ ափն ծովոն մեծի, և մինչև

<sup>1</sup> В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940, стр. 87.

ցահման Եգերացոց և մինչև ցատրոս մեծի լերին Կովկասու, զԳոգարացին և զԾանուր մինչև ցԴուռն Ալանաց»<sup>2</sup>:

Բագրատունիների թագավորությունն իր քաղաքական և տնտեսական խնդիրներից բացի, հասուկ ուշադրություն նվիրեց նաև երկու կրթական, լուսավորական և տնտեսարակ մշակութային հարցերին: Մաշուց յան դպրության հաղածական ավանդները, որ թիկունքում ունենին 5-րդ դարի ուկեղեցիկ դպրությունը, մտան զարգացման նոր հունի մեջ:

Բագրատունյաց թագավորական տաճ հայաձեռնություններից մեկը, և թերևս ամենաարդյունավետը, եղավ Սանահին և Հաղպատ մենատանների ատեղծումը: Անշուշտ, դրանք կենտրոններ էին, որ պիտի հոգացվեին ժամանակի կրոնական պետքերը, քայլ դրանք միաժամանակ այդ օրերի բարձրագույն ուսումնական հաստատություններն էին:

Պատկերավոր մտածած լինելու համար եթե թույլ տանք մեզ 9—13-րդ դարերը պատկերացնել համատարած գիշերվա սեփությամբ, ապա այդ խավարը փարատող ամենահզոր ջաները կրտսեններ հաղպատ-սահմանական բարձունքներում, հետո նաև՝ նրանց լճակից նոր Գետիկում, մեկ էլ հեռավոր Կիլիկիայում: Այստեղից հասկանալի է, թե որքան մեծ դեր ու ճակատագրական ամենիներ էին Վիճակված մայր հայրենիքի այդ սրբազն օջախներին: Այդտեղ, այդ լեռնագագաթներին մի կողմից մարմնավորվում էին հայ ժողովրդի ճարտարապետական փայլուն կարողությունները, քանդակագործական բարձրաճաշակ արվեստը, իսկ մյուս կողմից՝ ծաղկում էին գրչության, մանրանկարչության և մանավանդ գիտության, գեղարվեստական գրականության, մանկավարժական ուսումնառության բնագավառները: Հիրավի, հոգնոր սենդի լուսավոր աղբյուրներ, որնք դարեր շարունակ ողոգեցին հայ միտքն ու մշակույթը:

\*


Հայ կնոջ անունը հաճախ է հնչել մեր կյանքի ճակատագրական, ինչպես և առօրյա իրադարձություններում: Սանահինն ու Հաղպատն էլ կանացի նախաձեռնության արգասիք հանդիսացան: Բագրատունյաց Աշուտ Նրբորդ կամ Ռողրմած թագավորի ուսումնասեր կինը՝ Խոսրովկանուշ թագուհին

<sup>2</sup> Հովհաննես Դրախմանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 161:

էր այս անգամ, որ միտք հղացավ Հայոց աշխարհին իր պարգևած երկու արքապազմն զավակների՝ Սմբատի և Գուրգենի արևաշտության համար կերտել երկու անօրութական կոթողներ՝ Սանահինի և Հաղպատի աստվածամերը բարձունքներուն: Բարեկարան զուգայինիքամբ նոյն ժամանակաշրջանում Տրդատ ճարտարապետը, որի համարով էլ, ըստ որոշ տվյալների, մարմարավորվեցին Խոսրովկանուշ թագուհու երազակը:

Սանահինը հիմնադրվեց 967, իսկ Հաղպատը՝ 977 թվականին: Ծոսով այսուեղ հավաքվեցին կես հազարից ավելի մտավորականներ, հոգևորականներ, ճանավորներ, որպեսզի ոչ միայն աղոթքով ու ճգնաժամք, այլև մտքի ու աղվեստի նորակերտ հրաշալիքներով իսկակեն հավերժացնեին Բագրատունյաց տոհմի և հրանց ծնող սերունդների հիշատակը:

Այդտեղ, Սանահինի և Հաղպատի կրթօջախներում իրենց մեծահարուստ գիտելիքներն ի սաս դրին նայ դպրության զարգացման գործին այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսին էն Դիովլորոս կաթողիկոսը, Անահին Սանահինեցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավագը, Գրիգոր Տուտերդին և ուրիշներ: Մինչև հիմա էլ Սանահին հոյական կառուցների մեջ կատագուն է «Մագիստրոսի ճեմարանի», որտեղ դասավանդել է հայ իրականության այն ժամանակվա ամենամեծ մտածողը՝ Գրիգոր Մագիստրոսը: Վերջիններ թոյերից և բանական մեր առաջ հանում է դեռևս իր ամբողջական գնահատության սպասող փիլիսոփան, լեզվաբանը, քերականը, լուրգմանիչը, բանաստեղծը, աստվածաբանը, մանկավարժը, տեսաբանը, ինչպես նաև զորական ու զորավարը: Այդ նա էր, որ հիշտ գնահատելով պատմական դեպքերի զարգացումը, նկատում էր, թե հայ գրերի գլուխից հետո, սեփական պետության բացակայության պատճառով, գրի և դպրության սրանելի գրտող դարձավ լոկ հոգևոր բնագավառի մենաշնորհը: Այժմ, ասում էր նա, եթե սեփական թագավորություն վերատեղադրված է, պետք է զարկ տալ աշխարհիկ մանկակրթությանը, նկատի ունենալով պետության և ժողովրդի անմիջական շահերը դրսնորդ գիտության և գրականության ստեղծման անհրաժեշտությունը: Դա արդեն մշակույթի աշխարհականացման մեծ երեկույթի տեսությունն էր՝ մշակված Անի-Բշնի-Հաղպատ-Սանահին շառավիղով գործող Գրիգոր Մագիստրոսի կողմից: Այդ նա էր, որ մոռացության փոշոց դուրս քաշեց Սան-



Սամասին. Նախագալիքի առջևի խաչքարը

(Ծիրարիչ՝ Գր. Ամփուս)

նիս Շիրակացու գիտական և մասնավարժական աշխատությունները՝ պահանջեղով պատշաճ վերաբերմունք: Նրա գոյի տակ էր նաև, որ ծննդեց Բայրութասիրական և աշխարհիկ բովանդակությամբ գրված առաջին կանոնավոր բարձրավայսութ բանաստեղծությունը: Այսուղեւ նա, դիմելով ժամանակի երիտասարդությանը, մի կողմից կոչ է անում ենթակա երկիր մտած և «Արարատեան» զագալը» պղծելով եկած թշնամու դեմ, իսկ մոտ կողմից՝ Բանանաման բանաստեղծություններ գրելով արվեստը սպորել: Անա այդ հազվադեպնայի էր տեսակի մեջ միակ բանաստեղծությունից մի նմուշ, որը նա գենքի է կոչում ընթերցողին:

Աղե՛, զինեա՛, զինուրեա՛, սպառազինեա՛, դու վառեա...  
Արդ, միլարեայն դու պնդեա՛, զլայնալիճ հայրեանին,  
Զերեքթնեանն մինեա՛, յառաջ մատիր և քաղեա՛,  
Այս քեզ Բէլայն հաս հանդէս և թորգոմ-նանն Հայկալ...<sup>3</sup>

Որքա՞ն աշխարհիկ բանաստեղծական մտածողություն. բավական է այս տողերը թարգմանել աշխարհաբար, և կատացվի ժամանակակից բանաստեղծություն:

Իր նամակներից մեկում նա, արդեն շատ հնուից, Միշագետքից, կարուով և արոտավալից հառաջանքով դիմում է Սանահին իր ծանոթներին, ընկերներին՝ «Յիշելով զիայրական ծերոցդ ծայրագունից խնամս առ մեզ և խրատ և ողրումութեամբ բարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժառնան, հնեսորական և երածոտական զնուցայի զմտաւ ածեալ հանդէս և զմրցումն և զգելուցիկ մոլորիհնս և զմանկանցն ասդմուերգութիւնս քաղցրածանութեամբ վերառեցաւ, որ գրեթէ պետութեանցն և բոլորն երկնական դասու և օրորութեանց գերակատար գտեալք»<sup>4</sup>: Այս ոչշագրավ տողերում նա Սանահին ուսումնառության, երգասացության, գիտական մրցահանդեսների մակարդակը բարձր է դասում եռեւկայլամածից:

Սննարկի չէր լինի այս նամակից հիշել նաև այն սողերը, որ նկարագրվում է, թե ինչպես են ապրել տեղի ճգնավորները: Նրանք «ի մորթուց փայտից զգեստարեալ... խոտովք վայրենի շատացեալք. և ո-

մանց մաշկեօք միայն և առանց պարեգօտի և զգեստու՝ զտակ ամարայնոյ և զատևամանեացն... ձմերայնոյ... սովու և ծարապու համբերեալ»: Նա պատմում է, որ շատերն էլ, ճիշտ է, կրում էին զգեստ, բայց տակից հագնում էին այծի մորթուց կարկատած, չորացած կշկուտքներ, որոնց ատամնախոր չոր եղբերք, ժամանակի ընթացքում, կրուտում էին որովայնի մաշկը և պատճառում «տենչալի» մահ: Գրիգոր Մագիստրոսը հիշում է իր տեսածներից մեկին, որը ձիու ձարից և անսաւնեների պոչերի մազից խիստ ծանր քորձ էր պատրաստել՝ կոչու ու կոպիտ հանգույցներով, իսկ ուորերին ու ձեռքերին՝ «տոննակապան երկաթիս և շղթայս և ձեռնակապան և կանդրիս... Ծանրութիւն երկաթոյն և թոռուպին էր լուեր Շ և Խ» (140, շորջ 45—50 կլգր.): Իսկ սանունը՝ «Ի տերևոց ցաքոյ և ի կորզաց հիմնից աղացեալ թրէին. յարեգակնապին տապոյն արարեալ թիթսու. և այն իսկ էր նոցա կերակոր և ոչ հաց. այլ ամեննին ջուր, բայց միայն եթէ թթուիկ լեռթերորդում առուրն. և մերկը և բոկանիք և ամենայն զիշեր սաղմուերգութեամբ»<sup>5</sup>: Հետաքրքրական է նաև նրանց առողջության վիճակը. «Զօրութեամբն Սանտուծոյ ոչ հիմնադրեալք, այլ քաջողոցթեամբ հիրուց զակն ի մարմնի բոլոր Սրամեանն գտեալք»<sup>6</sup>: Այսինքն, նրանք ողջ հայ ժողովրդի ամենաառջ մարդիկն էին:

Նման կենսագրություն է ունեցել նաև նրանցավոր գիտնական և բանաստեղծ Հովհաննես Սարկավագը: Հաղպատի գրիշներից մեկը, հիշելով նրա շիրմիք, գրում է. «Սարկավագի վարդապետի... և թեփակար զնաւորի առուր շիրմիս»<sup>7</sup>: Այս սանուն-թեփիք՝ հոնի կորիզի և ցաքի տերևի փոշերիցն է՝ եկիված արևի տակ: Աղդ նույն Հովհաննես Սարկավագն էր, որ մի քանի օր պատահաբար մակաված էր մնացել Հաղպատի վանքի գրատանք: Երբ մի օր դուրը բացելով զարմացած հարցրել են, թե ինչո՞նք է սնվել, նա ցոյց է տվել գրապահոցի հին ձեռագրերը՝ ասելով: «Այդ է իմ կերակոր և ըմպելի, զոր կերայ և արքի զարու զայստուիկ»<sup>8</sup>:

Եվ այս Հովհաննես Սարկավագն էր, որ Բաղպատ-սանամինյան լեռնատաների գագաթներին երկնեց իր մեծանոշակ մաթեմատիկական, սովորագիտական, պատմա-

<sup>3</sup> Անդ, էջ 188:

<sup>4</sup> Անդ, էջ 189:

<sup>5</sup> Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դար, Ա, էջ 414:

<sup>6</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, 1961:

<sup>3</sup> Կ. Կոստանդնաց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 1910, էջ 284:

<sup>4</sup> Անդ, էջ 186—187:

կան, մեկնողական երկերը, հոգեշունչ աղոթքները և մասնավանդ «Առ ձագն...» խոհական, դրամատիկական երկարաշունչ քերթվածք: Այս քերթվածում տեսական ծանրակշին իմացությունների տեսակետից, առաջին անգամ, քննվում և լուծվում է միջնադարի ամենամեծ հարցը՝ բնության և դրվագա-տիզմի հարաբերության խնդիրը, և այն՝ հօգուտ բնության: Տեսություն, որը ժամանակի համաշխարհային մտածողության ամենագորսավոր կետերից մեկն է: Այստեղ էր, որ ծընվեց հրա մյուս հանճարեղ միտքը, որով տեսության և փորձի հարաբերության մեջ առաջնորդյունը տրվում էր փորձին:

Անձնուրացությամբ գիտությանը, մակավարժությանը և փիլիսոփայությանը նվիրված Հովհաննես Սարկավագի «դպրոցին մեջ էր, որ առաջին անգամ,—ասում է հայագետ Արշակ Ալպոյանցանը,—մեջեց բացատրությունը նոր մերուդի մը, որ իր ժամանական 4—5 հարյուր տարի վերջ Պետքնի և Տեգարդի կարող գրիշներուն տակ բանաձևակած, առաջադիմության գորավոր և արդյունաշատ նոր աղջակ մը պիտի ըլլար»<sup>9</sup>:

Ծանր օրեր տեսան Սահմանին ու Հաղպատ, Անին ու Հայաստանը: Հունական հաւածաբներին հաջորդեցին սեւզուկան ավերածությունները, քարուքանդ անող տեղահանությունները: Հովհաննես Սարկավագն իր աղոյացից երկերի անհունին նայեց և մրմիչաց:

Տէ՛ր, տեսանես զվարատումն երամց աղաւնեաց քոց՝ յորսորդաց շարաց, Տեսանես զգամավիծութիւն հօտի քո՝ ի գազանաց շաղղակերաց, Մի՛ անփոյթ առներ, աղաչեմք, Ալլ հալածեա՛... ի վերայ մեր յարձակմունքս...<sup>10</sup>

Սրանք են մայր հայրենիքում ծնված այդ օրերի բանաստեղծության հայրենասիրական ջերմ տողերը, և դրանց բնօրրանը Հաղպատն է:

\* \* \*

Հաղպատ-սահմանինյան մենաստանները դարեր շարունակ եղել են ոչ միայն գիտության, կրթության, լուսավորության տարածման խոչըն կենտրոններ, այլև դրանցից անրաժման՝ գրչության ու մանրանկարչության զարգացման վիթխարի օշախներ:

<sup>9</sup> Ա. Ալպոյանցան, Պատմութիւն հայ դպրոցի, Գալիքի, 1947, էջ 270:

<sup>10</sup> «Սովետը հալկականը», 1854, միջին էջ 34:

Այստեղ էր, որ, աստիճանաբար, նվիրատվությունների, ընդօրինակությունների և շարադրանքների եղանակով հավաքվեցին մեծ քանակությամբ ձեռագրեր՝ պահանջ առաջացնելով, որ ստեղծվեին նաև հատուկ գրատուն-գրապահոցներ թե՛ մեկում և թե՛ մյուսում:

Անշուշտ, միայն ճգնավորական կյանքի ու հոգերու կոչումի նվիրված մարդկանց ջանքերով չէր, որ առում էին ձեռագրերն աստեղ: Նրանց թիկունքում կանգնած էին ժամանակի կարող մեծատունները և ժողովորդը, որոնք արթեքավոր նվիրաբերություններ էին կատարում և՛ վանական հաստատություններին առհասարակ, և՛ գրատուն-գրապահոցներին: Հաւանապի է, որ դա միայն վանքի կարիքների համար չէր, այլ նաև գրոշական պարագաներ հայտալունու և տարբեր վայրերում ընդօրինակություններ պատվիրելու, գնումներ կատարելու համար: Իսկ, ինչպես հայտնի է, Հաղպատ-Սահմանինի միայն, եթե կարելի է ասել, «արտահանում» էին ձեռագրեր, այլև «ներմուծում»՝ հավասարակշռելով իրենց և մյուս օշախների պահանջն ու առաջարկը: Հայտնի է, օրինակ, որ Գրիգոր Տիա կաթողիկոսը (12-րդ դար) Կիլիկիայից դիմում էր Հաղպատ-Սահմանինի միաբաններին (օրինակ՝ Գրիգոր Տուտերդյուն), խնդրելով «մաշկալաթ» (պահներն մագաղաթ) հին գործեր: Հայտնի է նաև, որ Ղրիմում, Երուսաղեմում, Կիլիկիայում և այլուր գրվում էին ձեռագրեր՝ Հաղպատի և Սահմանինի համար:

Թե որքան ձեռագրեր են ծնվել Հաղպատում և Սահմանում, ստուգ տվյալներ չունենք: Խոսքը վերաբերում է լոկ պահպանվածին, իսկ պահպանվածը շատ շնչին մասն է ընդհանուր ամբողջության: Ոչ լրիվ տեղեկությունների համաձայն այժմ Հաղպատում գրված ձեռագրերից փրկվածների թիվը հասնում է ընդամենը չորս տասնյակի, իսկ Սահմանինից փրկվածներինը՝ երեք տասնյակի<sup>11</sup>: Ի՞նչ եղավ մնացածը: Ծանր ճակատագիր էր վիճակված գրչական այդ մեծ հարցատությանը: Դեռ վաղ ժամանակներում վանական միաբանները, օտար ասպատակություններից փրկելու նպատակով, ձեռագրերը տեղափոխում են մոտական անդաշխատը ձորի անմատչելի քարայրները:

Թե ինչպիսի նվիրվածություն և անձնագործություն են ցուցաբերել սահմաննեցիներն ու հաղպատացները ազգային այդ սրբություննե-

<sup>11</sup> Այս տվյալները առնված են Ա. Մաթևոսյանի «Հաղկական գրչական կենտրոններ» մեծարեք քարտարանից (Մատնադարան):

ները պահպանելու համար, կարելի է պատկերացնել հետևյալ օրինակով: Սահմանի հոչակավոր պահպանաշանում («Քոթուկ») կարդում ենք. «Ես կ ի ժամանակու անարդէն բռնադրացն շաղաթաշիցն եկեալ ի ձորն Սլորդեաց վասն աներեղյ վանորեցն Հաղպատու և Սահմանայ և Կամորչերացն քանդելոյ, ի հոյն զարացն ինսաւալու մի առաջ գնացեալ հասեալ Սահմանին, ի այն տեղն, որ երեք կրանատորք և երկրոտասան սարկաւագուեք վանից անաթն, սուրբ հշանք և զգգետոք տարեալ ի արևտեան կողմն պահեալ և եկեալ պատահեալ ի մեջ տափին անարդէն զարացն. բազում նեղութիւն ետուն, թէ սրբութեանց տեղին հշանց տան, և միարանքն ոչ կամեցան զարութիւն գերի տալ, և անարդէն առ եկեալ հանատակեցին երեք կրանատորքն և երկրոտասն սարկաւագ: Եւ յեսոյ առաջնորդը երեք խաչ կանգնեցին ի վերայ գերեզմանացն, որ մինչև ցայծմ ասի երեք խաչ...»<sup>12</sup>:

Փաստերից երկում է, որ Հաղպատ-Սահմանի քարայրներում ձեռագրեր և հարըստություններ են պահպանվել ոչ թէ օրերով, ամիսներով, տարիներով, այլ դարերով: Դեռ հոսանքի օրերի շխասած և պահուածները ետքերած՝ տեղացիները, նորանոր աղեստների պատճառով, դրսում կոտակված հետագայի հարստություններն ու ձեռագրերը տարել և պահել են ուրիշ քարայրներում: Եթե հայտնի է, որ սեղուկ-թաթարական արշավանքների ժամանակ է տեղի ունեցել ձեռագրերի հիմնական հավաքածուի տեղափոխությունը, ապա մեր Մատենադարանում գտնվող Սահմանի ավանդամատյանը, վկայում է, որ ինքը քարայր է մեկնել 18-րդ դարում, որովհետեւ ինքը ծնված է 17-րդ դարում: Այդ մատյանը քարայրից դրու է բերվել 18-րդ դարի վերջերին և այդ մասին ունի հասուն հիշատակարան: Հովհեմ արքայակուռապու Արդությանը գրում է, թէ ինչպես ինքը գալով Սահմանին առարում է «զՍահմանեցի Մուրատեաց Առաքել վարդապետն վասն որոնելոյ գրեացն, ի լայրս նորին բացեալ յԱջառաց այրն ընու բառ բացու գրեանց և զանկակաց գրեալ եր և աս Քեօթով գիրք, որ ունի զօրինակ ամենասն հարկատու թղթոցն նոյն վանիցն»<sup>13</sup>: Ստանալով այդ ձեռագիրը՝ նա վերստին և վիրում է Սահմանի վանքին, որտեղից և այն հետո տեղափոխվում է Թիֆլիս, ապա գալիս Մատենադարան:

Որ, իրոք, դրսի աշխարհում, այսինքն՝ Հաղպատ-Սահմանի մենաստաններում նո-

րից կոտակվել էին ձեռագրեր, այդ մասին է վկայում նաև Սահմանի ստացնորդ Խարգիս եպիսկոպոսը 17-րդ դարի կետերին՝ գրելով. «Ես ... Սարգիս եպիսկոպոս... նատար ի յարուս Սահմանին...»: Ասպա նա պատմում է իր մեծամեծ շինարարական, բարեկորոգչական աշխատանքների մասին, այդ թվում նաև ձեռագրերի գննան և նորոգման. «Եւ Մովսէս գիրք, (իմա՝ Մովսէս Խորենացի), Յովաննես գիրք (իմա՝ Յովանի Դրասիանակերոցի), Միհայել գիրք (Միհայել Ասորի), Վարդան (Արևելցի), Ստեփանոս (Օքբելյան), Ռուտակէս (Լաստիվերցի), Կիրակոս (Գանձակեցի) Բ գիրք, Բ կանոնք, աւտարանի լուծմունք, շարակնոց, աղջարացոյց գնեցի... և նոու Ս. Աստուածածին դրան վախտ, և այլ բուն սաղմուարան, և այլ ժամագիրք գնեցի, և այլ՝ միևնու գրեանք նորոգել ետու, որ ոչ գոյ համար»<sup>14</sup>:

Նոյն դարի երկրորդ կեսի մասին կա տեղեկություն, որի համաձայն Հաղպատում Միհթար իշխանը հանդիպում է բազմաթիվ ձեռագրերի. «Գուանէ, —ասում է պատմիչ Հովհաննես Ղրիմեցին, —զերկոսին վերնախորան սուրբ Գորիզոր եկեղեցոյ ի անհամար գրչագիր և երկաթագիր հնագոյն մատեանք, նոյնպէս և զշորեսին խորանս միջնայարկի զանգակատան»<sup>15</sup>:

Հաղպատ-Սահմանի քարայր-պահուցների մասին ուշագրավ տեղեկություն է թողել վրաց Վախուշտի արքայազնը իր «Վրաստանի աշխարհագրության» մեջ: Ի միջի այլոց, նա այն սիսակ պատկերացումն է ունեցել, թէ «Հաղպատը և Սահմանին կառուցվել են վրաց թագավորների կողմից», որոնցից իրը թէ հետագայում անցել է հայերին: Գալով ձեռագրերի պահուցներին՝ նա գրում է. «Այսուեւ, բարձր ժայռի մեջ գտնվում են բազմաթիվ այլեր, իսկ նրանց մեջ պահպանվում են մեծ թվով հին ձեռագրեր, որոնք սակայն չեն կարող օգտագործել, որովհետեւ անհնար է մարդուն հասնել այդ քարայրները»<sup>16</sup>:

Վախուշտին, որ գրել է այս տողերը, հավաստում է, որ մինչև 18-րդ դարի առաջին կեսը քարայր-պահուցներն անձեռնմխելի են եղել:

Բայց ահա գտնվում են մարդիկ, որոնք կարողանում են թափանցել այդ անմատչելի քարայրները և այնտեղից հանել ձեռագրերն

<sup>12</sup> Զեռ. № 3031, թերթ 81ա—82թ:

<sup>13</sup> Հովհ. Ղրիմեցի, Պատմութիւն հոչակավոր վանից Հաղպատայ և Նշանին, Վիլեննա, 1965, էջ 120—121:

<sup>14</sup> Վախուշտի, Գeография Հրանու, Տիֆլիս, 1904, стр. 33.

<sup>15</sup> Զեռ. № 3031, թերթ 1թ:

ու այլ հարստությունները: Այդ մասին նոյն Հովի. Դրիմեցին պատմում է, թե ինչպես Հաղպատի առաջնորդ Աբրահամ Թիքերտաղին և ոմն բախտահնդիր Պետրոս Տիրացու, դուրս են հանում բարպրների ձեռագրերը և դրանք, ինչպես նաև վանքում գրտերվող վերոբիշյալ ձեռագրերը, կարծ ժամանակում անհոգաբար շուալում են, վատենում, ցրում, իսկ հրանց հին, մաշված, թերթահան, կազմահան օրինակները հրկիզում: «Ժողովեալ առնասապարակ և դիզեալ հանդէպ զանգալատան դրան՝ իբր տասն կամ երկուասան ունաչափ բարձրութեամբ,—պատմում է նոյն հեղինակը,—հոր էարկ և այրեաց իբրև անպիտան»<sup>17</sup>:

Այո՛, եղել են նաև այսպիսի հոգևորականներ: Եվ դրանից հետո էր միայն, որ բարպրներում դեռևս մնացած ձեռագրերի բախտով սկսեցին հետաքրքրվել Հովսեի արք. Արդությանը, Սարգիս արք. Զալպալը, Աղեքսանդր Երիցյանը, Գյուտ բահանս Աղանջանցը և որիշներ՝ հասնելով մասնակի արդյունքի:

Հաղպատ-Սանահնի ձեռագրերի ոչնչացման հիմնական պատճառը, սակայն, եղել են սեղչույթան, մոնղոլական, պարսկական, կովկասան լեռնեցիների և որիշ ասպատակութերի բարբարությունները: Նրանք կա՞մ հրկիզում և ոչնչացնում էին այդ արժեքները, կա՞մ գերեվարում, որպեսզի հետո ծանր գնով վաճառենի հայերին:

Նման արշավանքներից մեկի մասին Սարգիս վարդապետը գրում է. «Յարշատան անդ Մահմատայ արքային պարսից ի Վրաստան ի գերել նորա զՏիխիս՝ ոչ միայն գրութիւնը և մատեանք լիշտակարանաց վանաց, այլև բովանդակ անօթք և կայք նորա ի քաղաքի ան գլուխ՝ համանգամայն յափշտակեալ կորան»<sup>18</sup>:

Հայ երևոյթին այդ հարստությունները նախապես փոխադրված են եղել Թիֆլիս՝ պահպանության: Երկի հետեւ այդ ժամանակ, գոյնեւ և ձեռագրերի հետ Հաղպատից Թիֆլիս է տեղափոխվել նաև Սարաթ-Նովան և մի քանի օր հետո Թիֆլիսի ավերման ժամանակ նախատակվել:

Կորած ձեռագրերից է Հաղպատի վանքի ավանդամատայանը կամ «Քոյուկը»: Այն ստեղծված է եղել վաղ ժամանակներում, և նրա մեջ արձանագրված են եղել արքայական ու անհատական բոլոր նվիրատվությունները, համապատասխան իրադարձությունները, դեպքերը: Վկասված է, որ այն

1795 թվականին, Աղա Մահմետ խանի նշված արշավանքի ժամանակ, «կորնչի և անթետ լինի ընդ այլոց կայից մենաստանիս... Քանակութիւն նորա, ըստ պատմելոց ականատեսից, ի չափ մեծութեան Աստուածաշունչ մատենի. սուսի նորա... շղթայագործ արծաթի պահպանակօք, յորում կային արձանագրեալ անուանը և ընծայք և պատճենք հրովարտակաց և ձեռնադրութեանց բազում թագաւորաց և իշխանաց Հայոց և Վրաց, և այլ բազմազան իրք և բանք պիտանիք»<sup>19</sup>:

Ասենք, որ նման մատյան չունենք առնասարակ. եղածը Սանահնի «Քոյուկն» է, որը շատ աղքատիկ ու անշուր է այս կորածի համեմատությամբ:

Վրաց Վահուշտի արքայազնի վերոբիշյալ աշխատության 1904 թվականի հրատարակության մեջ, քարպրներում պահվող ձեռագրերի մասին խոսք եղած տեղում, տրված է հրատարակողի հետևյալ ծանոթությունը. «Վահուշտի հաղորդումը (ձեռագրերի մասին) ճշմարտվեց. այդ քարպրներում գտնուված մի քանի քարացած ձեռագրեր հանձնուված են գիտությունների ակադեմիային. իսկ «Խվերիա»-ի անցյալ տարվա դեկտեմբեր ամսվա համարում տպված հաղորդման համաձայն նորից գտնված են շատ ձեռագրեր»:

Մեր Մատենադարանում այժմ կան մի քանի մեծարժեք ձեռագրեր՝ հանված այդ արեւից: Դրանցից արդեն հիշեցինք Սանահնի հոչակալոր «Քոյուկը»: Աղդպիսներից են նաև ամբողջապես քարացած ձեռագրիրը և որիշներ:

Վերջերս Մատենադարանում այս մեկ կամ մի արշավախումբ մեկնեց և այդ քարպրներում («Աշառա այր», «Զառնի այր», «Պառնի այր», «Ծակ այր»), հայտնաբերեց 9—15-րդ դարերին պատկանող լիստ քարքարված բազմաթիվ ձեռագրերի բեկորներ, կազմի տախտակների և կաշիների մնացորդներ, որոնք տեղափոխվեցին Մատենադարան<sup>20</sup>:

Հաղպատ-Սանահնիան մատենադարանները, աղբուամենայնիվ, իրենց գոյությունը պահպանեցին մինչև 1930-ական թվականները: 1931-ին աղդտեղից Մատենադարան են տեղափոխվում հազարամյա գոյատևության վերջին փատական վկաները, ընթամենը 45 ձեռագիր (12-ը՝ Հաղպատից, 33-ը՝ Սանահնից): Դրանց հետո նրանք, որպես մատենադարաններ, ավարտում են իրենց պատմական պահնածայի դերը: Պետք է ասել, սակայն, որ նրանք հիմա են որոշ առումով

<sup>17</sup> Հովի. Դրիմեցի, Նշված աշխ., էջ 122—123:

<sup>18</sup> Հովի. Դրիմեցի, Նշված աշխ., էջ 45—46:

<sup>19</sup> Անը, էջ 128:

<sup>20</sup> Բանքեր Մատենադարանի, № 5, 1960, էջ 535—538 (Ս. Քոլանցյանի հաղորդումը):

ներ չեն «հանձնվել»: Խոսքը քարայր-պահոցների մասին է, որոնց խորհրդավոր խորշը պայօք է շատ մասունքներ, ով գիտէ, գուցէ և բազմաթիվ ամբողջական ձեռագրեր կան:

Հաղպատ-Սանահին ձեռագրական ֆոնդերը, կազմված լինելով հին ձեռագրերից, իրենց մեջ ունեցել են նաև խիստ հազվադեպ ունիկումներ, որոնցից է, օրինակ, «Թարգմանչագիր» կոչված սաղմուարանը, որի ծննները կապվում է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և ճրանց աշակերտների հետ: Այդ ձեռագրի հայտնաբերողը եղել է Հովհաննես Սարկավագը: Նշված ձեռագրի հըռչակը ժամանակին այնքան մեծ է եղել, որ Հովհաննես Գառնեցին ուղղով մեկնել է այնտեղ և ընդողինակելով՝ տարել Գառնի: Այդ ձեռագրից նաև շատ որիշներն են օգտըլել: Մեծ հոչակ է ունեցել Սանահին «Ծաշոց»-ը: Արվեստի բացառիկ նմուշ է 1211 թվականին ստեղծված Հակոբ Գրչի և Մարգարե Նկարչի Ավելտարանը: Այստեղ է, որ խորանների սրբազն վերնամասերում տեղ են գտել իշխանական ծագում ունեցող մի աղջիկ և մի տղա՝ ձեռքին մեծ ծովկ: Դիմացից, ավետարանական համարարրատների միջից, լսվում է աշխարհիկ մի առօրյա ձայն՝ հաննելով ասես մինչև մեր ականջը: «Ծերանիկ, քանի զամ՝ ձուկն բեր»:

Հայ երևույթին Ծերանիկը կամ Ծերենիկը ոչ այլ ոք է, քան Սանահին այն մեծանարուս Շարենիկի հաջորդը, որի մասին 1152 թվականի արձանագրությունն ասում է: «...տուաք զուրք Սարգսի տանն՝ Սարգսի Ծերենիկան որդոյն»<sup>21</sup>: Եթե այդ, ապա նշված ձեռագրում առկա են իրական դիմապատկերներ:

Հետաքրքիր կիմելոր իմանալ, թե որն է եղել տեղում ստեղծված առաջին ձեռագրիը: Բարեբախտաբար ունենք համապատասխան վկայություն: Սանահին «Քոթուկում» արտագրված է ճրա հիշատակարանը. «Ես անարժան... գրիշ Սիմեան... Նիւլ. (թուականին) ի նորաշեն վանքը, որ կոչեցեալ Սանահին, Բրամանա հաւը իմոյ Յովհաննեսին, որ էր վանից շինութեան ամք Զ...»<sup>22</sup>: Այստեղից է՝ վանքի շինության թվականը 972—6—966 կամ 967, նայած, թե տոմարական ճշգրտված հաշիվները ի՞նչ ցուց կտան: Ինքը՝ ձեռագրիը գրված է եղել 972 թվականին, Սանահին վանքի կառուցման 6-րդ տարում: Կորած է նաև այս ձեռագրիը:

<sup>21</sup> Կ. Պաֆադարյան, Սանահին վանքը և ճրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 99—100:


<sup>22</sup> Զու. № 8081, թերթ 18ր:

Վերևում ակնարկ արվեց հայ կնոջ դերի մասին Սանահին և Հաղպատ մեծաստաների իմաստության բնութագրական կողմերից մեկը՝ լորովի արձագանք գտավ Լուսա ձորերում և սարավանդակներում: Խոսրովանշչի օրինակով այդ կողմերում, ազնիվ նպատակներից մղված, նորաւոր տիկիններ և օրինորդեր երևացին, ճրանցից մեկը (Վանենի) մի ամոր կամորջ կապեց Հաղպատ տանող ճանապարհի գետանցի վրա, մյուսը (Մարիամ) հիմնեց Հաղպատի Կյորիկյան արքայատիմի տապանատունը, երրորդը կառուցեց և Աստվածածին եկեղեցին, որը հաճախ ճրա անունով կոչվում է Խաթունաղեն, մի որիշը «ուկեմած» ձեռագրի ընծայեց վանականներին, և յորաքանչյուրն իր ուժի սահմաններում նպաստեց ընթանուր գործներ:

Հաղպատ-սանահինյան մեծաստանները, նվիրված լինելով գրչության, դպրության, լուսավորության, գիտության նպատակներին, միաժամանակ հանդիսանում էին քաղաքական կյանքի նետ կապված կենսորներ: Զմոռանանք, որ դրանք հիմնարդիված և հարստացված էին թագավորական ընտանիքների կողմից: Այդտեղ էին հաճախ թաղվում երկրի կյանքում մեծ դեր խաղացած գործիչները՝ ավելի քան պատկանելի դարձելով սրբավայրերի հեղինակություններ: Հայ երևույթին, այդտեղ են պահվել նաև թագավորական հին ո նոր զամազամ ձեռագրեր, հրովարտակներ և թղթեր: Այդ մասին է հուշում մեր Մատենադարանի № 7777 ձեռագրիը, վկայելով, թե Հովհաննես Սարկավագը վերոհիշյալ թարգմանչագիր սաղմուարանը գտավ «ի յարկեղ սուրբ Վարդապետացն և թագավորացն»: Հայ զորավարները, ուազմի դաշտ մեկնելուց առաջ, հաճախ, այստեղ էին գալիս երդվելու, աղոթելու և օրինություն ստանալու:

Հովհաննես Թումանյանը նման արարողություններ է նկատի ունեցել՝ «Անուշի» սուսահին տարբերակում գրելով.

Այս ձորերումն էր, որ Բագրատունին Բախտի հետ խաղաց յոր խաղը վերջին. Սեգ Տուտեռդին, Օհան Օձնեցին Հայրենից պաշտպան սուսերն օրինեցին:



Հաղպատ-Սանահին մենաստանների հայրենաւիրական աշխատանքների մեջ առանձին տեղ էր գրավում դավանանքի անշրջուրը ընթացքի պահպանությունը: Խնչպես երևում է, այստեղ էր տեսական այն անհամատելի ամրոցը, որին բախվում էին Բունամոյ գործիքները և Բյուզանդիոնի գործակալները: Անի անկաման Բախույնակին: Դրա փայլուն վկայությունն է քաղաքական առումով կանակածի Պետրոս Գետադարձ կաթողիկոսի՝ Դիմիրոս կաթողիկոսով փոխարինելու միջնորդումը: Իսկ Վերջին Սանահնեցի էլ: Ըստ երևոյթին, դեպքերն այլ ընթացք կըստանային, եթե Գետադարձի կողմանիցները նորից չենուացնեին Դիմիրոս Սանահնեցուն և տեղը չքազմեցնեին Պետրոս Գետադարձին: Ծառ չանցավ այդ օրից, երբ Վերջին հովերին հանձնեց քաղաքի մուտքերի բանահները: Դիմիրոսի առողջ և անդաւաճան վարքն էր պատճառը, որ իր միջավայրում նա մինչև վերջ հորջորջվեց կաթողիկոս:

Անեցիներն էլ, որ մի օր, նրա դեմքի կաթողիկոսական բողոքատեղով, գահընկեց էին արել նրան, ըստ երևոյթին, շտուռ զղացին: Պահանձված մի զրոյցի համաձայն, Անի բնակիչները այդ դեպքից հետո Անին հասած կոտորածների ու ավերածությունների հիմքում տեսնում էին Դիմիրոս կաթողիկոսի գահազրկումը: Ուստի նրանք մարդ ուղարկեցին Սանահին՝ նրա գերեզմանից մասներներ գողանալու և Անի տանելու, որպեսզի անեցիները զղացով աղերսին ու հացեին նրա օգնությունը, «զի թերև լողութին արացէ քաղաքին»: Սանահին առաջնորդը, իմանալով այդ մասին, արգելեց նշխարներ տեղափոխնելը՝ ասելով. թող «ժողով բազմութեան բնակչացն Անոյ այս գայցեն, և մեք ընդ նորա պաղատեսցոր՝ խնդրել զօղողութին»<sup>23</sup>:

Զրոյցը՝ զրոյց, բայց այս զրոյցի հիմքում ընկած է Դիմիրոսի քաղաքական հայցքների պաշտպանության գաղափարը:

Երևում է նաև, որ այս նոյն միջավայրի այնքան անվանի գործի Գրիգոր Մագիստրոսը գալթակիլել և հեռացել էր հաղպատանահնեցիներից՝ մտնելով Պետրոս Գետադարձի կոսակիցների շարքը: Սանահնեցիները չեն մոռագել այդ և կշտամբական նամակ են ուղարկել նրան՝ Հայոց Միջագետք: Գրիգոր Մագիստրոսը, որ արդեն զղացել էր, տեսնելով հովերի խարեւոյնը, նամակ է գրում, հավատացնելով, որ երբեք չպիտի մոռանա նրանց, ինչպես «Այս-

ոքիկ, որք վարեալը էին ի Բաքերովներ ովատելու առ յերուաղէմ»: Ուշ էր արդեն: Սանահներ, սակայն, կայում էր, արդարադատու հշմարիտ՝ իր լեռնային աննվաճ բարձութերի նման:

Կկամենայինք գնահատական խոր ասել նաև Հաղպատ-Սանահնը այն դերի մասին, որը վերաբերում է Հյուսիսային Հայաստանում, Վրաստանում և Աղվանիքում գտնվող հայ բնակավայրերի ազգային կյանքը հրակելու և «հովկելու» բնագավառին: 18-րդ դարի մի վավերապուղ տալիս է մի հազվագյուտ ցանկ, որի օգնում է տեսնելու հայ ժողովրդի էթնիկական լայնասիրու այն սահմանները, որոնց վրա իր հոգևոր հշիանության պահպանի տներն էր տարածել Հաղպատը: Ըստ այդ Վավերապուղի Հայաստանի, Վրաստանի և Աղվանիքի թագավորների 11-րդ դարում Հաղպատի իրավունքների տակ են դնում հայարձնական և լուսավորչական նետկալ թեմերը (անոնները մասամբ աղավաղական են). «Ալատեանցն, Տաշիրն... Լոռի... Բազակ տաղտն... Խօրանուտակունն... Հայունոյ և Ծանկունոյ տախտն... Օձուն տախտն... Թիֆլիզ քաղաքն, Վեր[ի] գորի, Սամշվիլիկն, Դմոնիսն և Բողամուձորն... Վերի Ձմելզվան, Թամարշէն, զՕրին-սրն, Շիսօրն, Սամծուլըն և Մծովուլըն... Բրինձն, Նարաստէվն... Սուրամն, Ղօփիցին, Ստենն, Դեղումն, Կախէրն, Շաքին, Վարխունն, Զուրուրայի Շայրն, բոյոր Սումիւթայ տանն, Նախէն, Ծապալայն, Տալաւըրն... Ախալքալաքն, Սամցխէն, Խօօգվին (Թմոզվին), Սաշատախօն, Զաւէն, Խմերէթ, զԱրդանունն, Բուլբուլէանն, Քօրունանն, Սանտալէն, Թատունն, Ածողվէրն... Տայողն, Գորականն, Զորագեղն, Կայեանն, Կայէծօնն, Աղէստաֆէն, Խօօշարազրն, Մահկանն, Գաքէն, Շամքօրն, Շաքէն... Գայագէնն, Բարամն... Մանասն մինչև ի Վօդամած՝ իրեան շրջակայ գիլօրէիրն» ու նրանց թեմերով<sup>24</sup>:

Անշուշն, Եշված ոչ բոյոր վայրերի ամբողջ բնակչությունն է եղել հայ և դրանք ոչ բոյորն են ի Ակզրանն եղել հայապատական բնակավայրեր ու գավառներ, բայց որ այդպիսի զգայի տեղ են գրավում Եշված ցանկում, վեր է ամեն կասկածից: Ուշագրավ է նաև Ատենի կոչված թեմը, որը մինչև օրս էլ կանգուն է հայոց ճարտարապետական կոթողներից մեկը՝ կառուցված 7-րդ դարում հայ ճարտարապետ Թողոսակի գլխավորությամբ: Պահպանված հայագիր և հայարար հիշատակարանն ասում է. «Ես Թողոսակ շինող սրբ-

<sup>23</sup> Հովի. Գրիմեցի, Նշված աշխ., էջ 258:

<sup>24</sup> «Էլումար», 1898, Ա, էջ 260—264:

**բոյ Եկեղեցւոյս»<sup>25</sup>:** «Նաև այդ թեմի վրա է, որ իշխան է Հաղպատր, որպես նայ լուսալորչական թեմի:

Նման խնդիրները մեզ տանում են դեպի իր ժամանակի հայ-Վրացական հարաբերությունները, որոնք միշտ էլ եղել են բարիդրացիական:

Հայ-Վրացական բարեկամական փոխարքարությունները՝ կապված Հաղպատ-Սահմանին հետ հնից են գալիս: Պետք է ասել, որ հետեւ սկզբից Հաղպատու ու Սահմանինը հարգալից վերաբերմունքի են արժանանում ևս վրաց թագավորների և իշխանների կողմից: «Ոչ միայն թագաւորք Հայոց, —գրում է Հովհաննես Ղրիմեցին, —այլև թագաւորք Վրաց... պատուի կալան միշտ զայս այսոնք»: Որպես օրինակ նա հիշում է «Դավիթ որդի Գէորգեայ» արքաին, «Գորգի քաջն՝ հայր Թամարայ թագուհուն», իրեն՝ «Թամար թագուհուն», և ուրիշների<sup>26</sup>:

Այդ բարեկամության բազմանշանակ դրսորումներից մեկն է Հովհաննես Սարկավագի և Դավիթ Վրաց թագավորի մտերմությունը: «Քարթիս Ցիտվերա» երկի ներմուծման հեղինակը գրում է, թե Վրաց Դավիթ արքան, որ շատ էր սիրում հայերին (և կինն էլ հայ էր), գալիս է առ ոտն «հուսոր վարդապետի ի Հաղպատ՝ Սարկաւագ անոն-խոսովանդու նմա զանցան իր, և կորացուեալ զպատուական գլուխն՝ ալրինէր ի հնանէ: և հոսէր ընդ նմա և փարէր զպարանցաւ նորա: Եւ նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութեննէս. ի բաց զնա յինէն, զի մի՛ աշխատ լիցիս: Եւ թագաւորու համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս արս յինէն, հայր պատուական»: Եւ (Հովի. Սարկավագը) ... զայս ասէր՝ եղեալ զձեռն ի վերայ գլուխն. «Գտի զԴահիթ ծառայ ին և հի-դով սրբով իմով ածի զնա»... Եւ զուարձանայր արքայն, և գովէր զգեղեցկատիպ թարգմանութիւնն Հայոց»<sup>27</sup>: Այդ թարգմանությունը իսկապես, հոշակավոր էր, որովհետո նկատի ուներ Հաղպատի վերոհիշյալ թարգմանագիր Սահմուարանը՝ գտնված Հովհաննես Սարկավագի ձեռքով: Ուշագրավ է նաև այն պարագան, որ Վրաց Դավիթ արքան ալերան լավատեղյակ է եղել

<sup>25</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, Տեղեկագիր, 1945, № 5, էջ 4:

<sup>26</sup> Հովի. Ղրիմեցի, Նշված աշխ., էջ 94:

<sup>27</sup> Քարթիս ցիտվերայի... մին հայերեն թարգմանությունը (Բայերն և Վրացերնեց), Թբիլիսի, 1958, էջ 255:

նայոց լեզվին և դպրությանը, որ նկատել է այդ Սաղմուարանի ընտիր թարգմանությունն լինելը:

Հաղպատ-Սահմանինում, դարեր նետու, եղել է նաև Վրաց Հերակլ Երրորդ թագավորը և 1790-ական թվականներին Հաղպատու վերահաստատել երա՛ կովկասահացության վրա ունեցած մին իրավունքները: Հասկանալի է, որ նա աղբուղ պիտի հանդիպած լիներ նաև իր վաղեան բարեկամին և պալատական երգչին՝ Սայաթ-Նովային (արդեն տեր Ստեփանոս), որն այդ ժամանակ Հաղպատում տխուր կատակով վրևնջում էր.

Հաղպատի լուսարար Սայաթ-Նովեն իմ, Մե կանթեղու վառելու ձեռ չունիմ...

Առհասարակ Հաղպատու ու Սահմանինը հանդիսացել են արքապական մենաստաններ, և նրանց հետ ավելի շատ թագավորական առօրյա է կապված եղել, քան որևէ այլ մենաստանի հետ:

Կիլիկյան հայ թագավորներն անգամ, հեռվից հեռու, չեին մոռանում Հաղպատու ու Սահմանինը: Հայտնի է, օրինակ, որ 1271 թվականին Լևոն Երրորդ թագավորը, իր օժման առիթով, Հաղպատին է նվիրում շատ ընծաներ, այդ թվում նաև «ընտիր գրչագիր օրինակ մի Սահմուամեկնչի Լամբրոնացոյց»:

Հիրավի, մեծ և հարուստ է եղել Հաղպատ և Սահմանին մենաստանների առօրյան: Նորանք ապրել են հազարամյա մի փառաթեղ ու փոթորկոտ կյանք, որի հշանարանն էն հանդիսացել հետևյալ պատգամները. հայրենիք, ազգային անխոտոր դավանանք, լուսավորություն, մշակույթ, ժողովորդների բարեկամություն և խաղաղություն: Այդ հայրենապահապան պատգամներով է, որ նրանք անցել են իրենց ոժվարին ուղին՝ ճգված 10-րդ դարից մինչև 20-րդ դարը:

Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչներից մեկը, դեռևս 1080-ական թվականներին մի նվիրաբերության առթիվ, Հաղպատի տեղապահը մեկի մասին գրել է. «զԱրծությունն ի Հաղպատ»: Հիրավի արծվարուն, այդ թվում և՛ Հաղպատը, և՛ Սահմանինը, որոնց ճարտարապետական սրբազն կամարների տակ դարեր շարունակ ապրեց և հզորացավ, մաքատեց ու դիմացավ հայ ժողովրդի ազատաւեր և արվեստաւեր ոգին:

Մենք հապատ ենք այդ սրբարամներով: Աշխատենք միայն արժանի պահապանն ու մեկնարանը լինել այդ լուր կոթողների: